ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն 0071
Ք. Երևան, Նուբարաշեն 1/3

Հեռ (010) - 47 - 53 - 22
Էլ. Հասցե hapakhk@gmail.com

N - 375 /20 2020թ.

``ԱԻԴԱ ԹՐԵՅԴ``ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Է. Փոթոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի պարոն Է.Փոթոյան,

Համաձայն 21.12.2019թ. թիվ ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-3 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել բժշկական դիմակներ՝ միանգամյա օգտագործման (5000 հատ, միավորի գինը 7.1 ՀՀ դրամ):

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ *Գնորդն իրավունք ունի... միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:*

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ... բ)ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30օրից ավելի:

Ինչպես հայտնի է, Գնորդ ընկերության կողմից Ձեզ դեռևս դեկտեմբեր ամսից բազմիցս դիմակների մատակարարման պատվեր է արվել, որը սակայն մնացել է անպատասխան: Մինչ օրս Ձեր ընկերությունից որևէ դիմակ չենք ստացել:

Հետևաբար, Ձեր կողմից խախտվել են ապրանքների մատակարարման համար պայմանագրով սահմանված բոլոր ժամկետները:

Պայմանագրի 6.2-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա,

սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Ավելին, Ձեր ընկերության կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով Վաճառող ընկերությունը ստիպված է եղել շուկայից ձեռք բերել դիմակներ՝ բավական բարձր արժեքով, քան սահմանված է Պայմանագրով: Այսինքն, եթե Ձեր կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները պատշաճ կատարվեին, ապա Գնորդ ընկերությունը չէր կրի նյութական վնաս:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից Պայմանագրի՝ «անհաղթահարելի ուժի ազդեցությունը» ֆորս մաժորային իրավիճակներին հղում կատարելու հանգամանքին, ապա դա որևէ հիմնավորում չունի հետևյալ պատճառաբանությամբ՝

Նախնառաջ, մեր ընկերության կողմից առաջին պատվերներն արվել են դեռևս դեկտեմբեր ամսից սկսած, երբ մեր պատվերներն առանց որևէ հիմնավորման չկատարվեցին: Ավելին, ՀՀ և ՉԺՀ միջև առևտրաշրջանառության մասով որևէ սահմանափակում առկա չէ և ստեղծված դրությունը որպես անհաղթահարելի ուժ համարելը Ձեր սուբյեկտիվ գնահատականն է, որը կարող է հաստատվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից հայտնում ենք Ձեզ որ Գնորդ ընկերությունը (ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն) հրաժարվում է շարունակել Ձեզ հետ համագործակցությունը Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն և խնդրում ենք Պայմանագիրը համարել լուծված սույն ծանուցումը ստանալու օրվանից:

Հարգանքներով

Տնօրեն Ս.Խաչատրյան